

**Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ**

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը և խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պաշտասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2024թ. մարտի 29-ին դրական կարծիք է արտահայտել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության՝ անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամոռորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և՛ ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ԷՖ ԷՍ ՓԻ Ըղվայս» ՍՊԸ,

Ռուզաննա Բադալյան,

Տնօրեն/

առաջադրանքի պատասխանատու



26 մարտի 2025թ.

ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն

Խորհրդի անդամների ցանկ

Արամ Խաչարյան՝ Խորհրդի նախագահ

Վարդան Չիլինգարյան՝ Խորհրդի գործադիր անդամ

Արմեն Մանուկյան՝ Խորհրդի ոչ գործադիր անդամ

Արմեն Մելիք-Խարայեղյան՝ Խորհրդի ոչ գործադիր անդամ

Կարեն Վերմիշյան՝ Խորհրդի ոչ գործադիր անդամ

Արմեն Ավանեսյան՝ Խորհրդի անկախ անդամ

Անաստաս Աղազարյան՝ Խորհրդի անկախ անդամ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	4,630,592	4,149,052
Ոչ նյութական ակտիվներ	5	80,902	78,656
Հետաձգված հարկային ակտիվներ	9	-	8,819
		4,711,494	4,236,527
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	85,570	88,427
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	1,541,302	1,118,484
Ավանդային միջոցներ		-	1,706,692
Մնացորդներ բանկերում		3,188,032	1,895,210
		4,814,904	4,808,813
Ընդամենը ակտիվներ		9,526,398	9,045,340

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	8		
Կանոնադրական կապիտալ		2,601,880	2,601,880
Պահուստային կապիտալ		399,000	399,000
Կուտակված շահույթ		5,277,719	4,991,249
		8,278,599	7,992,129
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	211,394	241,056
		211,394	241,056
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	734,806	599,184
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		301,599	212,971
		1,036,405	812,155
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		9,526,398	9,045,340

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. մարտի 26-ին:

Վարդան Չիլինգարյան
Գլխավոր տնօրենի ժ/պ

[Signature]



Էլիզա Գասպարյան
Գլխավոր հաշվապահ

[Signature]

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.		
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	11	7,597,234	6,893,647
Վաճառքի ինքնարժեք	12	(4,974,416)	(4,783,549)
Համախառն շահույթ		2,622,818	2,110,098
Այլ եկամուտ		75,557	42,678
Վարչական ծախսեր	13	(497,495)	(384,133)
Այլ ծախսեր	14	(569,312)	(457,395)
Գործառնական գործունեությունից շահույթ		1,631,568	1,311,248
Ֆինանսական եկամուտ		149,300	52,588
Այլ ֆինանսական հոդվածներ	15	(277,676)	178,225
Շահույթ մինչև հարկերը		1,503,192	1,542,061
Շահութահարկի գծով ծախս		(419,067)	(332,170)
Տարվա շահույթ		1,084,125	1,209,891
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1,084,125	1,209,891

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	2,601,880	399,000	4,339,874	7,340,754
Տարվա շահույթ	-	-	1,209,891	1,209,891
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	1,209,891	1,209,891
Շահաբաժիններ	-	-	(558,516)	(558,516)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,601,880	399,000	4,991,249	7,992,129
Տարվա շահույթ	-	-	1,084,125	1,084,125
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	1,084,125	1,084,125
Շահաբաժիններ	-	-	(797,655)	(797,655)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,601,880	399,000	5,277,719	8,278,599

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների մատուցումից դրամական միջոցների մուտքեր	7,202,524	7,221,784
Նյութերի, ապրանքների ձեռքբերում	(46,727)	(50,475)
Աշխատանքների, ծառայությունների ձեռքբերում	(582,800)	(515,389)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(3,652,283)	(3,416,198)
Շահութահարկի վճարում	(352,631)	(510,349)
Վճարումներ բյուջե	(1,048,196)	(796,371)
Վճարումներ պարտադիր սոցիալական վճարների գծով	(114,631)	(84,553)
Այլ մուտքեր	12,659	9,526
Այլ ելքեր	(103,998)	(94,408)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	1,313,917	1,763,567
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(885,400)	(537,647)
Ստացված տոկոսային եկամուտ	176,815	45,896
Ավանդի ներդրում	-	(1,700,000)
Ավանդի գումարի վերադարձ	1,700,000	-
Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	991,415	(2,191,751)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վճարված շահաբաժիններ	(797,655)	(558,516)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(797,655)	(558,516)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	1,507,677	(986,700)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(214,855)	114,516
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	1,895,210	2,767,394
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	3,188,032	1,895,210

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 1997թ. «Զվարթնոց» օդանավակայանից համապատասխան ծառայություններն առանձնացնելու ճանապարհով և օգոստոսի 7-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից ու ստացել իրավաբանական անձի պետական գրանցման վկայական:

Ընկերությունը վերակազմակերպվել է ՀՀ կառավարության 1999թ. օգոստոսի 3-ի թիվ 491 որոշմամբ և ՀՀ Տրանսպորտի նախարարության 1999 թվականի օգոստոսի 9-ի թիվ 158 հրամանի: Այն հանդիսանում է «Հայաէրոնավիգացիա» պետական փակ բաժնետիրական Ընկերության (գրանցման համար 271.070.01467, վկայական 01Ա036186) իրավահաջորդը:

ՀՀ կառավարության 2000թ. դեկտեմբերի 16-ի թիվ 828 որոշման համաձայն Ընկերության բաժնետոմսերի տնօրինման իրավունքը վերապահված է եղել ՀՀ կառավարությանն առնթեր քաղաքացիական ավիացիայի վարչությանը, որը ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 11-ի թիվ 733 որոշմամբ վերակազմավորվել է ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության քաղաքացիական ավիացիայի վարչությունից ՀՀ կառավարությանն առնթեր քաղաքացիական ավիացիայի վարչության, գերատեսչական կարգավիճակով:

ՀՀ կառավարության 2024թ. հուլիսի 4-ի ՀՀ կառավարության 2000թ. դեկտեմբերի 16-ի թիվ 828 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1050-Ա որոշման համաձայն Ընկերության բաժնետոմսերի տնօրինման իրավունքը վերապահվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:

2003թ-ից Ընկերությանն են փոխանցվել նաև ազգային մյուս քաղաքացիական օդանավակայանների համապատասխան ծառայությունները: Իր հիմնադրման օրից Ընկերությունը նպատակային և հետևողական քայլեր է կատարում Քաղաքացիական Ավիացիայի Միջազգային Կազմակերպության (ԻԿԱՕ) և Եվրոպական Աէրոնավիգացիայի Անվտանգության Գործակալության (ԵՎՐՈԿՈՆՏՐՈՆԼ) պահանջներին համապատասխան գործունեություն ծավալելու և միջազգային սահմանված չափորոշիչներին ու առաջարկվող գործելաձևներին համապատասխանելու ուղղությամբ:

Ընկերությունն իրավաբանական անձ համարվող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կազմակերպություն է, որը ստեղծվել է և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական օրենսգրքին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքին, գործող այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:

Ընկերության ստեղծման նպատակը տնտեսական գործունեություն (այդ թվում՝ ՀՀ օդային տարածքի օգտագործման և ՀՀ միջազգային պարտավորությունների ու ՀՀ-ում գործող պահանջներին համաձայն ավիացիայի բնագավառում կիրառվող տեխնիկական սարքավորումների զարգացման ապահովման) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են.

- ՀՀ օդային տարածքում օդային երթևեկության կազմակերպում և ապահովում;hi
- ՀՀ օդային տարածքում իրականացվող չվերթերի աերոնավիագացիոն տեղեկատվության ապահովում;
- թռիչքների ռադիոտեխնիկական ապահովում և կապի սարքավորումների տեխնիկական ներդրում, սպասարկում և այլն;
- իր պատասխանատվության տակ գտնվող օդային տարածքում թռիչքների կառավարում;
- սահմանված կարգով թռիչքների կազմակերպման ապահովում:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝

ՀՀ, ք. Երևան, Իսահակ Գասպարյան փողոց հ. 33:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է՝ 280 (2023թ. դեկտեմբերի 31-ին՝ 279 աշխատակից):

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2,601,880 հազար (Երկու միլիարդ վեց հարյուր մեկ հազար ութ հարյուր ութսուն միլիոն) ՀՀ դրամ, որը կազմում է 260,188 սովորական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10 հազար ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և լրիվ վճարված:

Ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակ և 100 % պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպություն է, որն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օդային տարածքում («Երևան» թռիչքատեղեկատվական շրջան) աերոնավիագացիոն սպասարկման գործառույթները: Վերջինս իրականացնում է բաժնետոմսերի կառավարումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից (այսուհետ՝ ՏԿԵՆ):

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք կանոնադրությամբ կամ օրենքով վերապահված են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ գլխավոր տնօրենի իրավասությանը, իրականացնում է Ընկերության խորհուրդը, որը կազմված է 7 անդամներից:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժույթային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար:

Համաշխարհային գնաճը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա գեղջված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են

ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 17-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ. որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),
- «Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետագործ վարձակալությամբ գործարքներում» (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),
- «Մալարկարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ» (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),
- «Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)
- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվեպնդությունների ներկայացում և բացահայտում»
- ՖՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվեպնդականության. բացահայտումներ»:

3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Եվրո	413.89	447.90
ԱՄՆ դոլար	396.56	404.79
Բեժ Բրիտանական ֆունտ	499.27	515.38
Ռուսական ռուբլի	3.71	4.50

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ

որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 40-67 տարի
Կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ	- 20-35 տարի
Մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ	- 10-24 տարի
Արտադրական, տնտեսական գույք և այլ	- 5-35 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային ծրագրեր	- 3-10 տարի
Լիցենզիաներ և արտոնագրեր	- 3-10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	- 3-10 տարի

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն՝ պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոխատուցման դիմաց:

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Ընկերությունը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները՝ Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, որպեսզի վճարի վարձավճարները և Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

3.6 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով միջին կշռված մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 18.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով)։

- դրանք պահվում են այն ընդհանուր մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ։

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։ Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում։ Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը։

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» ընդհանուր մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով։ հետագայում, անկախ ընդհանուր մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով։ Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները։

Այս կատեգորիան ներառում է նաև ներդրումը սեփական կապիտալում։ Ընկերությունը հաշվառում է ներդրումը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և չի կատարել անշրջելի ընտրություն՝ Ընկերությունում ներդրումը և ցուցակված սեփական կապիտալի բաժնետոմսերը հաշվառել իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում։ Իրական արժեքը որոշվել է ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան, որը չի թույլ տալիս սկզբնական արժեքով չափումը։

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգտուղ կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում։ Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ։

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»։

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից։ Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի

ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 18.2-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ

կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական

պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.12 Հասույթ

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Ընկերությունը առաջին անգամ ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը կիրառել է 2018թ. հունվարի 1-ից: Մի շարք նոր ընդունված ստանդարտներ նույնպես կիրառվել են Ընկերության կողմից 2018թ. հունվարի 1-ից, բայց դրանք էական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերության կողմից նոր ընդունված ստանդարտներին անցման հետևանքով պահանջվող համադրելի ֆինանսական հաշվետվությունները չեն վերաներկայացվել:

ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը սահմանում է համապարփակ մոտեցումներ հասույթի որոշման գծով, թե երբ հասույթը պետք է ճանաչվի և ինչ գումարով պետք է ճանաչվի: Սույն ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 18. «Հասույթ», ՀՀՄՍ 11. «Կառուցման պայմանագրեր» ստանդարտներին և համապատասխան մեկնաբանություններին: Համաձայն ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտի, հասույթը ճանաչվում է, երբ գնորդը կամ ծառայություն ստացողը ձեռք է բերում վերահսկողություն ապրանքի կամ ծառայության նկատմամբ: Վերահսկողության իրավունքի փոխանցման ժամկետի որոշումը, «Ժամանակի կոնկրետ պահին», թե «Ժամանակի ընթացքում», պահանջում է դատողություններ:

Ընկերությունը ընդունել է ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը՝ օգտագործելով կոմույատիվ (աճողական) ազդեցության մեթոդը (առանց գործնական օգուտ ունենալու մտադրության)՝ սկզբնական ընդունման պահին կիրառելով սկզբնական ընդունումից առաջացող ազդեցությունները (այսինքն՝ 2018թ. հունվարի 1-ից): Համապատասխանաբար 2017թ. համադրելի ֆինանսական տեղեկատվությունը չի վերաներկայացվել: Այսինքն՝ այն ներկայացված է ինչպես նախորդ տարի ներկայացվել է՝ ՀՀՄՍ 18. «Հասույթ», ՀՀՄՍ 11. «Կառուցման պայմանագրեր» ստանդարտների և մեկնաբանություններին համապատասխան: Համապատասխանաբար ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտով պահանջվող բացահայտումները, ինչպես ընդունված է, չեն կիրառվում համադրելի տեղեկատվության վրա:

Ընկերության հասույթի ճանաչման հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես ծանոթագրություն 11:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Հոլամաս	2ինություններ	Շենք, շինություններ	Կառուցվածքներ, փոխանցող հարմարանքներ	Մեքենա-սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական և տնտեսական գույք, գործիքներ	Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>										
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	461,218	1,285,037		237,363	8,173,593	145,049	103,572	207,437	11,601	10,624,870
Ավելացում	-	-	-	-	-	-	-	285,290	-	285,290
Ներքին շարժ	-	-	-	-	405,276	-	17,641	(423,327)	410	-
Կապիտալացում	-	3,140		930	9,659	-	-	-		13,729
Դուրսգրում	-	-51,830		(1,583)	(191,922)	-	(3,014)	-	(639)	(248,988)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	461,218	1,236,347		236,710	8,396,606	145,049	118,199	69,400	11,372	10,674,901
<i>Ավելացում</i>										
Ներքին շարժ	-	-	-	-	-	-	-	391,659	-	391,659
Կապիտալացում	-	-	-	-	95,887	12,315	2,624	(111,213)	387	-
Դուրսգրում	-	-	-	-	25,349	-	-	565,017	(1,111)	590,366
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	461,218	1,236,347		236,710	8,199,519	157,364	120,192	914,863	10,648	11,336,861

Կուտակված մաշվածություն										
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	(429,162)	(129,883)	(5,536,875)	(55,847)	(64,384)	-	(10,210)	(6,226,361)	
Տարվա ծախս	-	(38,764)	(11,132)	(473,154)	(11,757)	(7,344)	-	(317)	(542,468)	
Դուրսգրում	-	46,499	919	191,922	-	3,001	-	639	242,980	
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(421,427)	(140,096)	(5,818,107)	(67,604)	(68,727)	-	(9,888)	(6,525,849)	
Տարվա ծախս	-	(36,430)	(11,029)	(432,549)	(12,280)	(7,796)	-	(311)	(500,395)	
Դուրսգրում	-	-	-	318,231	-	631	-	1,111	319,973	
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(457,857)	(151,125)	(5,932,425)	(79,884)	(75,892)	-	(9,088)	(6,706,271)	
Հաշվեկշռային արժեք										
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	461,218	814,920	96,614	2,578,499	77,445	49,472	69,400	1,484	4,149,052	
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	461,218	778,490	85,585	2,267,094	77,480	44,300	914,863	1,560	4,630,590	

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գրավարդված հիմնական միջոցներ չունի:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 870,748 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ ունեն զրո հաշվեկշռային արժեք (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 874,109 հազար դրամ):

Ընկերության հիմնական միջոցների նկատմամբ չկան որևէ սահմանափակումներ:

Ընկերությունը չունի որևէ պարտավորության համար որպես ապահովություն գրավարդված հիմնական միջոցներ:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների արժեքը կազմել է 914,863 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 69,400 հազար դրամ):

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ

	Համա- կարգչային ծրագրեր	Լիցեն- զիաներ և ապրան- քանիշեր	Այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	46,795	7,758	280,637	335,190
Ավելացում	2,317	14,226	-	16,543
Դուրսգրում	(12,102)	(160)	(233)	(12,495)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	37,010	21,824	280,404	339,238
Ավելացում	-	23,408	8,000	31,408
Դուրսգրում	-	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	37,010	45,232	288,404	370,646
<i>Կուտակված ամորտիզացիա</i>				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	(43,642)	(7,312)	(195,039)	(245,993)
Տարվա ծախս	(1,675)	(792)	(24,617)	(27,084)
Դուրսգրում	12,102	160	233	12,495
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(33,215)	(7,944)	(219,423)	(260,582)
Տարվա ծախս	(1,551)	(2,722)	(24,888)	(29,161)
Դուրսգրում	-	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(34,766)	(10,666)	(244,311)	(289,743)
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,795	13,880	60,981	78,656
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,244	34,566	44,093	80,903

6 Պաշարներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Նյութեր	55,019	56,967
Վառելիք	9,795	10,560
Պահեստամասեր	195	187
Այլ	20,561	20,713
	<u>85,570</u>	<u>88,427</u>

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,495,197	1,098,066
Այլ դեբիտորական պարտքեր	2,364	-
	<u>1,497,561</u>	<u>1,098,066</u>
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	5,051	4,845
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	38,690	15,573
	<u>43,741</u>	<u>20,418</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	<u>1,541,302</u>	<u>1,118,484</u>

Բյուջեի գծով դեբիտորական պարտքի մնացորդը կազմում է 15,573 հազար. դրամ (2023թ.՝ 5,014 հազար դրամ):

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 72 օր (2023թ.՝ 58 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունը լրիվ պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 360 օր, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը 360 օրով գերազանցելու դեպքում առևտրային դեբիտորական պարտքերը համարվում են անհավաքագրելի:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Դեբիտորական պարտքերի ժամկետային վերլուծությունը բացահայտված է ստորև.

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Մինչև 6 ամիս	78,825	20,418
6 ամսից մինչև 1 տարի	1,462,477	1,098,066
	<u>1,541,302</u>	<u>1,118,484</u>

8 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	(232,237)	(259,068)
Շահույթում կամ վնասում ճանաչված ծախս	20,843	26,831
Տարեվերջի մնացորդ	<u>(211,394)</u>	<u>(232,237)</u>

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Արձակուրդի պահուստ	8,819	4,409	13,228
	<u>8,819</u>	<u>4,409</u>	<u>13,228</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հիմնական միջոցներ	(241,056)	16,434	(224,622)
	<u>(241,056)</u>	<u>16,434</u>	<u>(224,622)</u>
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	<u>(232,237)</u>	<u>20,843</u>	<u>(211,394)</u>

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ

	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Արձակուրդի պահուստ	8,632	187	8,819
	<u>8,632</u>	<u>187</u>	<u>8,819</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հիմնական միջոցներ	(267,700)	26,644	(241,056)
	<u>(267,700)</u>	<u>26,644</u>	<u>(241,056)</u>
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	<u>(259,068)</u>	<u>26,831</u>	<u>(232,237)</u>

9 Կապիտալ և պահուստներ

9.1 Կանոնադրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր 2024թ.	Սովորական բաժնետոմսեր 2023թ.
Հայտարարված բաժնետոմսեր	2,601,880	2,601,880
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 10,000 դրամ	260,188	260,188

9.2 Շահաբաժիններ

2024թ. ընթացքում Ընկերությունը հայտարարել և վճարել է 797,655 հազար դրամ շահաբաժին, իսկ 2023թ. Ընկերությունը հայտարարել և վճարել է 558,516 հազար դրամ շահաբաժին:

9.3 Պահուստային կապիտալ

Մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը պահուստային կապիտալին կուտակված շահույթից կատարվել են հատկացումներ, ինչը կարգավորվում է Ընկերության կանոնադրությամբ: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահուստային կապիտալը կազմել է՝ 399,000 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 399,000 հազար դրամ):

10 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	208,448	15,776
Հաճախորդներից կանխավճարներ	194,312	203,873
Պետական բյուջեին կրեդիտորական պարտքեր	153,847	242,845
Հատուցումներ աշխատակիցներին	104,710	87,696
Չօգտագործված արձակուրդի պահուստ	73,489	48,994
	<u>734,806</u>	<u>599,184</u>

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

11 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մայրուղային չվերթներ	4,194,562	3,358,801
Օդանավակայանային	3,402,414	3,534,343
Այլ	258	503
	<u>7,597,234</u>	<u>6,893,647</u>

Մայրուղային չվերթներ - հասույթ, որը ձևավորվում է ՀՀ օդային տարածքում (մայրուղիներում) մատուցվող անրոնավիզացիոն ծառայություններից:

Օդանավակայանային - հասույթ, որը ձևավորվում է ՀՀ օդանավակայաններ չվերթող (մեկնող) օդանավերին, անրոդորումի 20 կմ շառավղով շրջակայքում իրականացվող թռիչքի փուլում մատուցվող անրոնավիզացիոն ծառայություններից:

Այլ - ավիացիոն ծառայությունների մատուցումից ստացված հասույթ:

Ընկերության հասույթը ձևավորվում է ծառայությունների մատուցումից տարանցիկ չվերթների գծով, ծառայությունների մատուցումից օդանավակայանում մեկնման/ժամանաման գծով և այլ ավիացիոն ծառայությունների մատուցումից՝ «Ժամանակի կոնկրետ պահին», հետևյալ աշխարհագրական շրջաններից /սեզմենտ/՝

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը տրոհված.

Հազար դրամ	Ծառայություն- ների մատուցում (տարանցիկ չվերթներ)	Ծառայություն- ների	Այլ ծառայու- թյունների մատուցում	
2024թ.	Հայաստան	Հայաստան	Հայաստան	Ընդամենը
Սեզմենտի հասույթ՝ ընդհանուր	4,194,562	3,402,414	258	7,597,234
Միջսեզմենտային վաճառքներից հասույթ	-	-	-	-
Սեզմենտի հասույթ՝ արտաքին հաճախորդներին վաճառքներից	4,194,562	3,402,414	258	7,597,234
Հասույթի ճանաչման ժամանակացույց				
- Ժամանակի կոնկրետ պահին	4,194,562	3,402,414	258	7,597,234
- Ժամանակի ընթացքում	-	-	-	-
	<u>4,194,562</u>	<u>3,402,414</u>	<u>258</u>	<u>7,597,234</u>

Հազար դրամ	Ծառայություն- ների մատուցում (տարանցիկ չվերջներ)	Ծառայություն- ների	Այլ ծառայու- թյունների մատուցում	
2023թ.	Հայաստան	Հայաստան	Հայաստան	Ընդամենը
Սեզմենտի հասույթ՝ ընդհանուր	3,358,801	3,534,343	503	6,893,647
Միջսեզմենտային վաճառքներից հասույթ	-	-	-	-
Սեզմենտի հասույթ՝ արտաքին հաճախորդներին վաճառքներից	3,358,801	3,534,343	503	6,893,647
Հասույթի ճանաչման ժամանակացույց				
- ժամանակի կոնկրետ պահին	3,358,801	3,534,343	503	6,893,647
- ժամանակի ընթացքում	-	-	-	-
	<u>3,358,801</u>	<u>3,534,343</u>	<u>503</u>	<u>6,893,647</u>

12 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	4,052,182	3,852,182
Նյութեր	32,135	24,877
Վառելիք	7,188	7,763
Կոմունալ ծախսեր	58,504	52,882
Մաշվածություն և ամրոտիզացիա	524,508	564,296
Կադրերի պատրաստում, վերապատրաստում	89,292	84,069
Գործուղման ծախսեր	67,380	67,636
Թոփքների ստուգում	68,900	59,810
Այլ	74,327	70,034
	<u>4,974,416</u>	<u>4,783,549</u>

13 Վարչական ծախսեր

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	365,066	270,006
Մաշվածություն և ամորտիզացիա	5,049	5,256
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	7,507	8,204
Ապահովագրական ծախսեր	36,646	35,087
Առդիտորական և խորհրդատվական ծախսեր	15,518	6,557
Այլ	67,709	59,023
	<u>497,495</u>	<u>384,133</u>

14 Այլ ծախսեր

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Eurocontrol անդամավճար	177,110	130,176
Արհմիության հատկացումների հաշվին օգնություն	309,992	295,637
Այլ	82,210	31,582
	<u>569,312</u>	<u>457,395</u>

15 Այլ ֆինանսական հոդվածներ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)՝		
Դեբիտորական պարտքեր	(86,874)	75,585
Բանկային մնացորդներ	(214,855)	114,517
Կրեդիտորական պարտքեր	24,053	(11,877)
	<u>(277,676)</u>	<u>178,225</u>

16 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	439,910	359,001
Հետաձգված հարկ	(20,843)	(26,831)
	<u>419,067</u>	<u>332,170</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	1,503,192		1,542,061	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	270,575	18.00	277,571	18.00
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	148,492	9.9	54,599	3.5
Շահութահարկի գծով ծախս	<u>419,067</u>		<u>332,170</u>	

17 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

17.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական

միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի ապացույցները: Այս պաշարների ապագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող այլ փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

18 Ֆինանսական գործիքներ

18.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.8-ում:

18.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,495,197	1,098,066
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,188,032	1,895,210
	<u>4,683,229</u>	<u>2,993,276</u>

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	386,647	152,466
	<u>386,647</u>	<u>152,466</u>

19 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության հասույթի հիմնական մասն իրականացվում է Եվրոյով: Իսկ կատարված ծախսերի հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա վաճառքներից, օտարերկրյա ավիաընկերություններին և որոշակիորեն այլ ոլորտի ընկերություններին ծառայությունների մատուցումից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են Եվրոյով, ԱՄՆ դոլարով և ռուբլիով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հոդված

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԱՄՆ դոլար

Եվրո

Այլ

Ֆինանսական ակտիվներ

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

4,759

1,494,836

-

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

30,040

2,023,642

339,135

34,799

3,518,478

339,135

Ֆինանսական պարտավորություններ

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

540

194,841

121,397

540

194,841

121,397

Զուտ արդյունք

34,259

3,323,637

217,738

Հոդված

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,759	1,097,621	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16,058	920,937	536,842
	20,817	2,018,558	536,842
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	551	205,215	-
	551	205,215	-
Զուտ արդյունք	20,266	1,813,343	536,842

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուբլու նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	3,426	2,027	332,364	181,334

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Ընկերության գործառնական արդյունքի վրա մեծ ազդեցություն կարող է ունենալ Եվրոյի փոխարժեքի տատանումները:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները, մինչև մաքման ժամկետը պահվող ներդրումները, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլինեք մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2024թ.	Անտոկոս
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	
Մինչև 6 ամիս	313,158
6 ամսից մինչև 1 տարի	153,847
1-5 տարի	73,489
	540,494
2023թ.	Անտոկոս
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	
Մինչև 6 ամիս	103,472
6 ամսից մինչև 1 տարի	242,845
1-5 տարի	48,994
	395,311

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

20 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը, որոնք բացահայտված են ծանոթագրություն 9-ում:

Դեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից

(լեվերիջ): Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	8,278,599	7,992,129
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(3,188,032)	(1,895,210)
Կապիտալ	5,090,567	6,096,919
Ընդհանուր սեփական կապիտալ	8,278,599	7,992,129
Փոխառություններ	-	-
Ընդհանուր ֆինանսավորում	8,278,599	7,992,129
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	1.63	1.31

21 Պարտավորվածություններ

21.1 Իրավական պարտավորվածություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը որոշ ավիաընկերությունների հետ ունեցել է դատական վեճեր՝ հանդես է եկել որպես հայցվոր: Մասնավորապես՝

- «Էլբրուս Ավիա»՝ 6,305 ԱՄՆ դոլար;
- «Բաշկիրյան ավիաուղիներ»՝ 957.73 Եվրո;
- «Կուբանի ավիաուղիներ»՝ 2,412 Եվրո;
- «Արմավիա Ավիաընկերություն»՝ 638,689.38 Եվրո;
- «Աերոսվիտ»՝ 5,028 Եվրո;
- «Էյր Արմենիա»՝ 409,637.7 Եվրո;
- «ՎԻՄ ԱՎԻԱ»՝ 28,872 Եվրո:

Ընդհանուր հայցը կազմել է՝ 1,085,596,81 Եվրո և 6,305 ԱՄՆ դոլար:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը հանդես է եկել որպես պատասխանող թվով երեք դատական գործերում, որոնք գտնվում են դատավարության փուլում, իսկ դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվության վրա էական չեն:

22 Պայմանականություններ

22.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

22.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

22.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

23 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

23.1 Վերահսկողություն

Ընկերության ժնեդոմսերի 100%-ը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը (ՀՀ ՏԿԵՆ), որն էլ հանդիսանում է վերջնական վերահսկողը:

23.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Տարվա ընթացքում հայտա- րարված	Տարվա ընթացքում վճարված	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հայտարարված և վճարված շահաբաժիններ	-	797,655	797,655	-

ՀՀ պետական բյուջեի հետ գործարքներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ		
ՀՀ պետական բյուջե վճարված հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ, տույժեր և տուգանքներ պետական մարմիններին, ներառյալ սոցիալական վճարները	1,515,458	1,391,273

23.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում էական մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	203,056	222,268